# ՍԱՂՄՈՍ 128

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

| NASB | NKJV | NRSV | TEV | NJB |
|---|---|---|---|---|
| ՏԻՐՈՋ վախի երանությունը<br><br><u>MT ներածություն</u><br>Աստիճանների երգը | ՏԻՐՈՋԻՑ վախեցողների օրհնությունը | Մեծ և հաջողակ ընտանիքը ՏԻՐՈՋԸ ընծայվելու վարձքն է (Իմաստասիրական Սաղմոս) | ՏԻՐՈՋԸ հնազանդության վարձքը | Օրհնություններ հավատարիմների համար |
| 128:1-4 | 128:1 | 128:1-4 | 128:1 | 128:1 |
| | 128:2-4 | | 128:2-4 | 128:2-3 |
| | | | | 128:4-6 |
| 128:5-6 | 128:5-6ա | 128:5-6ա | 128:5-6 | |
| | 128:6բ | 128:6բ | | |

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)**
*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 128:1-4**
**[1]Երանի՛ բոլոր նրանց, որ վախենում են ՏԻՐՈՋԻՑ**
**Ու քայլում են Նրա ճանապարհներով:**
**[2]Քանի որ Քո ձեռքերի աշխատանքն ես ուտելու.**
**Օրհնություն ես ունենալու ու բարգավաճելու ես:**
**[3]Քո կինը մի պտղաբեր որթատունկի է նմանվելու քո տան ներսում,**
**Քո որդիները ձիթենու տնկիների նման են լինելու սեղանիդ շուրջը:**
**[4]Ահա, ՏԻՐՈՋԻՑ վախեցող մարդն այսպես է օրհնվելու:**

**128:1 «Երանի՛»** Այս բառի (BDB 80) շուրջ բացատրության համար տես Սաղմ.1:1-ի գրառումը: Եբրայերենում կան երկու գլխավոր տերմիններ «երանի, օրհնված» կամ «երջանիկ» հասկացության համար. դրանք երկուսն էլ կապված են Աստծո և մարդկանց հետ: Թույլ տվեք որպես օրինակ օգտագործել 2 Օրինաց 33-ը՝

1. օրհնել (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)</u>)
   ա.ԳՈՅԱԿԱՆ – BDB 139, տես՝ 2 Օր.33:23
   բ. ԲԱՑ – BDB 138, տես՝ 2 Օրինաց 33:1,13,20,24

2. երանի – BDB 80, կիրառված Սաղմ. 1:1-ում և ևս 18 անգամ Սաղմոսներում, բայց ոչ Ծննդոցում կամ 2 Օրինացում:

ՅԱՀՎԵԻ օրհնությունները ուղղակիորեն կապ ունեն այն մարդկանց հետ, ովքեր ծածկված են Նրա ուխտով: Դրա հիմքը հնազանդությունն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ): Բարգավաճման և բավարարվածության այս ամբողջ հասկացությունը ՀԿ-ի «երկու ճանապարհի» մասն են կազմում, որը տեսնում ենք Սաղմոս 1-ում, 2 Օրինաց 30:15,19-ում և նկարագրված որպես «անեծք» և «օրհնություն» Ղևտացիների 26-ում և 2 Օրինաց 27-30-ում:

Իրապես օրհնված անձն այն մարդն է, ով ճիշտ հարաբերություն ունի՝ (1) Աստծո հետ, (2) իր ընտանիքի հետ, և (3) Աստծո ժողովրդի հետ: Բոլոր երեք ոլորտները պետք է լինեն ներդաշնակության մեջ:

❖ **«բոլոր»** Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչքանով է սա սահմանափակված (նման է Հռոմեացիների 8:28):

1. Տիրոջից վախեցողները, Սաղմ. 128:3,4 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ))
2. Նրա ճանապարհներով քայլողները (տես՝ Սաղմ. 119:2-3)

Այսպիսով օրհնությունը «բոլորի» համար չէ, անգամ ոչ բոլոր ուխտի մարդկանց համար, այլ միայն հավատարիմ հետևորդների:

Սա առնչվում է այն բանի հետ, թե ինչպես պետք է Քրիստոնյաները վերաբերվեն ներկայիս Իսրայելի վիճակին: Ուխտի հնազանդությունը ուխտի խոստումների անհրաժեշտ պայմանն է:

❖ **«վախենում են»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)

❖ **«քայլում են»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ

❖ **«ճանապարհներ»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

**128:2-3** Ուշադրություն դարձրե՛ք հավատարիմ հետևորդների համար ուխտի խոստումներին (այստեղ՝ մի անհատի):

1. քո/իրենց ձեռքերի աշխատանքն ես ուտելու
2. ուրախ են լինելու
3. բարեկեցիկ
4. լավ ընտանեկան կյանք
5. շատ, առողջ երեխաներ
6. երկար կյանք

Սա է ՀԿ-ի օրհնությունների էությունը: ՅԱՀՎԵՆ ուզում է ազգերի ուշադրությունը գրավել՝ Իսրայել ազգն օրհնելու միջոցով: Երբ նրանք ուշադրություն դարձնեն, Իսրայելը պետք է պատմի նրանց իրենց օրհնության և խաղաղության աղբյուրի՝ ՅԱՀՎԵԻ մասին:

Պետք է ասել, որ բնակչության մեծ աճը Աստծո պատվերն էր՝

1. Ծննդոց 1:28, 9:1,7-ում
2. Ծննդ. 12:2, 13:16, 16:10-ում Աբրահամին տրված խոստման մի մասն էր
3. այն նաև Եգիպտոսում Հակոբի ընտանիքի իրողությունն էր (տես՝ Ծննդ. 28:14), որը եգիպտացի առաջնորդներին վախ էր ներշնչում և սկսեցին հալածել իսրայելացիներին (Ելից 1-2)

**128:2ա** Այս խոստումը գերության սպառնալիքի ճիշտ հակառակն է: Գերությունը Աստծո դատաստանն էր ուխտի անհավատ հետևորդների հանդեպ: Այն Իր նախատեսած նպատակների ճիշտ հակառակն էր: Դա հեգնանքի մարմնացումն էր:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 128:5-6**
**[5]ՏԵՐԸ քեզ կօրհնի Սիոնից, ու Երուսաղեմի բարությունը կտեսնես**
**Քո կյանքի բոլոր օրերում:**

**[6]Այո՛, որդիներիդ որդիներին կտեսնես:**
**Խաղաղությո՛ւն լինի Իսրայելի վրա:**

**128:5-6** Սա փակման աղոթք է թե՛ անհատ հավատարիմ հետևորդի և թե՛ ազգային Իսրայելի համար (տես՝ Սաղմ. 128:6բ): Հաճախ Սաղմոսները սկսում են որպես անհատները Աստծուն դիմելիս, բայց ընթացքում, դրանք վերածվում են հավաքական սաղմոսների:

1. Սաղմ. 128:5ա – օրհնի (BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով)
2. Սաղմ. 128:5բ – տեսնես... (BDB 906, KB 1157, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)
3. Սաղմ. 128:6ա – նույնը ինչ #2
4. Սաղմ. 128:6բ – ԲԱՅ չկա, սակայն ենթադրվում է, որ աղոթք է (տես՝ Սաղմ. 125:5)

Հետաքրքիր է, որ Գաղ. 6:16-ում Պողոսի եկեղեցուն ուղղված ակնարկում կիրառվում է Սաղմ. 128:6-ի պես արտահայտություն: Հայտնի չէ, թե արդյոք սա ուղղակի, գիտակցված ակնարկ է, թե ոչ:

❖ Ուշադրություն դարձրե՛ք «Երուսաղեմի բարությունը» զուգահեռ է «կտեսնես քո որդիների որդիներին» խոսքին: Սա վերաբերում է երկարատև խաղաղության, բարգավաճման և սոցիալական կայունության (այսինքն՝ «կտեսնես որդիներիդ որդիներին»), հ. 6ա:

**128:5 «Սիոնից»** Սա վերաբերում է ՅԱՀՎԵԻ տաճարում բնակությանը (տես՝ Սաղմ. 20:2):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՈՆ</u>

**128:6բ «խաղաղություն լինի Իսրայելի վրա»** Սա պարբերաբար կրկնվող թեմա է (տես՝ Սաղմ. 125:5, Եսայի 66:12): ՅԱՀՎԵՆ աշխարհին խաղաղություն կբերի (տես՝ Ես. 2:4, 9:5,6, Միքիա 4:3,4, Զաք. 9:10): Մեսիան կլինի «Խաղաղության Իշխանը»:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)</u>

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա <u>ուղեցույց</u> հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Սահմանե՛ք եբրայերեն «օրհնյալ, երանի» տերմինը (Սաղմ. 128:1ա):
2. Սահմանե՛ք եբրայերեն «վախ» տերմինը (Սաղմ. 128:1ա)
3. Ինչո՞ւ է «շատ երեխաները» համարվում օրհնություն:
4. Ի՞նչ կապ ունեն հավատք, ընտանիք և ազգ կատեգորիաները: